ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Կրեդիտ Կոնցեպտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության Հիմնադիրների 30 ապրիլի 2020թ. թիվ 1 հիմնադիր ժողովի որոշմամբ

Փոփոխված է՝

Բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 14/09/20 թ. թիվ 2 որոշմամբ
Բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 06/07/21թ. թիվ 6 որոշմամբ
Բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 08/07/22թ. թիվ 12 որոշմամբ
Բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 13/04/23թ. թիվ 16 որոշմամբ
Բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 28/12/23թ. թիվ 20 որոշմամբ
Բաժնետիրական ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 14/05/25թ. թիվ 25 որոշմամբ

Ընդհանուր ժողովի նախագահ՝
Մերի Նիկողոսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Կենտրոնական բանկում

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝
Մ. Գալստյան

Digitally signed by Martin Galstyan
Date: 2025.07.04 09:34:53 AMT
Reason: Գրանցած է 18.06.2025թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԵԴԻՏ ԿՈՆՑԵՊՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

ք. Երևան 2025թ.

Karen Petrosyan
Digitally signed by Karen Petrosyan
Date: 2025.05.19 15:38:50 +04'00'

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ 4
3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ 4
4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ 5
5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5
6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 6
ԺՈՂՈՎ 6
ԽՈՐՀՈՒՐԴ 11
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ 13
7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ 14
8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ 14
9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ ԵՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 15
10. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 15
11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 16
ՀԱՎԵԼՎԱԾ 17

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 **«ԿՐԵԴԻՏ ԿՈՆՑԵՊՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն** փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վարկային կազմակերպության գործունեության իրականացման միջոցով շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնետոմսերի:

1.2 Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրականբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ **«Կրեդիտ Կոնցեպտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն**
կրճատ՝ **«Կրեդիտ Կոնցեպտ» ՈՒՎԿ ՓԲԸ**
անգլերեն լրիվ՝ **"Credit Concept" universal credit organization closed joint stock company**
կրճատ՝ **"Credit Concept" UCO CJSC**
ռուսերեն լրիվ՝ **"Кредит Концепт" универсальная кредитная организация закрытое акционерное общество**
կրճատ՝ **"Кредит Концепт" УКО ЗАО**

1.4 Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0099, Աջափնյակ, Արզումանյան փողոց 16/7:

1.5 Ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գրանցվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում (այսուհետ՝ ԿԲ): Գրանցվելու պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և ստանում է վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա:

1.6 Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և այլ նշանների ու ֆիրմային ռեկվիզիտներ:

1.7 Ընկերության գործունեության ժամկետն անսահմանափակ է:

1.8 Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և բոլոր մարմինների համար:

1.9 Ընկերության բաժնետերերն են սույն Կանոնադրության անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում նշված անձիք: Բաժնետերերը կարող են փոփոխվել օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Ընկերության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2 Կենտրոնական բանկի կողմից տրված վարկային կազմակերպության գործունեության լիզենզիայի հիման վրա Ընկերությունը կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

2.2.1 ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ,

2.2.2 տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

2.2.3 տրամադրել երաշխիքներ,

2.2.4 իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել,

2.2.5 մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

2.2.6 մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,

2.2.7 գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

2.2.8 իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

2.2.9 ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

2.2.10 մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

2.2.11 ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

2.2.12 Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

2.3 Բացառություն են կազմում 2.2.5, 2.2.6 կետերում նշված ֆինանսական գործառնությունների իրականացումը:

2.4 Ընկերությունը ֆինանսական գործառնությունները իրականացնում է անկանխիկ եղանակով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1 Ընկերության կանոնադրական կապիտալը ձևավորվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից և կազմում է 743,000,000 (Յոթ հարյուր քառասուներեք միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 74,300 (Յոթանասունչորս հազար երեք հարյուր) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

3.2 Ընկերության Կանոնադրական կապիտալի լրիվ բաժնետոմսերը վճարված են և տեղաբաշխված են Ընկերության բաժնետերերի միջև՝ սույն Կանոնադրության Հավելված կազմող բաժնետերերի ցուցակի համամասնությամբ:

3.3 Ընկերությունը կարող է իր որոշմամբ փոփոխել կանոնադրական կապիտալի չափը: Ընկերության Կանոնադրական կապիտալի փոփոխման կարգը սահմանվում է

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3.4 Ընկերության բաժնետերերը կարող են իրենց բաժնետոմսերն օտարել սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:

3.5 Բաժնետիրոջ կողմից Ընկերության իր բաժնետոմսը (կամ դրա մի մասը) թույլատրվում է փոխանցել (օտարել) երրորդ անձանց միայն բաժնետերերի Ժողովի համաձայնությամբ: Փոխանցման համաձայնության վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա բաժնետերերի ձայների առնվազն երկու երրորդով: Բաժնետիրական Ընկերության կամ Բաժնետիրական Ընկերության այլ բաժնետերերի կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու կամ փոխանցման համաձայնություն չտալու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձի:

3.6 Արգելվում է բաժնետիրոջ կողմից Ընկերության իր բաժնետոմսը գրավ դնելը՝ առանց Ժողովի համաձայնության: Գրավադրման համաձայնության վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա Ընկերության բաժնետերերի ձայների առնվազն երկու երրորդով: Բաժնետիրական ընկերության Ժողովի կողմից Ընկերության 2 անընդմեջ ժողովում բաժնետոմսերի գրավադրման համաձայնություն չտալու դեպքում բաժնետոմսերը կարող են գրավադրվել առանց Ժողովի համաձայնության:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

4.1 Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի առնվազն 20 տոկոսի չափով:

4.2 Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

4.3 Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պահուստատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Ընկերությունն իրավունք ունի «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

5.2 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության Խորհրդի կողմից:

5.3 Մասնաճյուղի և ներկայացուցչության ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են վերջինիս տված լիազորագրերի հիման վրա:

5.4 Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1 Ընկերության կառավարման մարմիններն են.

- **Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)**
- **Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)**
- **Գլխավոր գործադիր տնօրենը**

<u>ԺՈՂՈՎ</u>

6.2 Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը ժողովն է, որն ունի իր իրավասության շրջանակներում Ընկերության կառավարման և գործունեության հարցի վերջնական լուծման իրավունք:

6.3 Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով:

6.4 Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

6.5 Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

6.6 Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

6.7 Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ

հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.
թ) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, եթե կանոնադրությամբ այդ իրավունքը վերապահված չէ Խորհրդին.
ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.
ժգ) սույն օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
ժդ) ժողովի վարման կարգը.
ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաեւ հրապարակային հայտարարության ձևով.
ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
ժը) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.
ժթ) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում.
ի) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

իա) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իդ) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը.

իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը.

իզ) սույն օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

6.8 Սույն կանոնադրության 6.7 կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել խորհրդին կամ գործադիր մարմնին, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով նախատեսված դեպքերի:

6.9 Բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով սահմանված դեպքերի ժողովում ձայնի իրավունքից օգտվում են Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

6.10 ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե տվյալ հարցով որոշում ընդունելու համար «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով և սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

6.11 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:

6.12 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «դ», «զ» և «ժթ» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

6.13 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «գ» և «ը» ենթակետերում սահմանված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

6.14 ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

6.15 Ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

6.16 Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության

մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

6.17 Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցության ձայնի իրավունքով, Ընկերության վերստուգողը, Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

6.18 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

6.19 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավել:

6.20 Ժողովի մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

6.21 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է պարունակի տվյալներ յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի, ըստ դրանց տեսակների և դասերի մասին:

6.22 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:

6.23 Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

6.24 Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա ժողովի գումարման մասին ծունուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումը ուղարկել այն անձնաց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

6.25 Ընկերության բաժնետերը (բաժնտերերը), որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել խորհրդի և վերստուգողի անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

6.26 Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի

քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի, և առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

6.27 Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

6.28 Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:

6.29 Արտահերթ ժողովի հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի որոշմամբ պետք է սահմանվեն՝

ա) քվեաթերթիկի ձևը

բ) Ընկերության բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.

գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկներն Ընկերության կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:

6.30 Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:

6.31 Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:

6.32 Խորհուրդն իրավունք չունի փոփոխություններ մտցնել Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից առաջարկվող օրակարգում, ինչպես նաև փոփոխել օրակարգի քննարկման ենթակա հարցերի առաջարկվող ձևակերպումները, բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկվող օրակարգի հարցերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի իրավասության առարկա:

6.33 Եթե արտահերթ ժողով գումարելու պահանջը ներկայացվում է Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից, ապա այն պետք է պարունակի պահանջը ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող

բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի: Արտահերթ ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովը գումարելու պահանջ ներկայացրած անձի (անձանց) կողմից:

6.34 Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում:

Խորհուրդն արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կարող է ընդունել միայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

<u>ԽՈՐՀՈՒՐԴ</u>

6.35 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

6.36 Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.

գ) Ժողովների օրակարգերի հաստատումը.

դ) Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.

ե) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ»-ի ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

է) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

ը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

թ) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

ժ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժա) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
ժբ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
ժգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
ժդ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
ժե) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.
ժզ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.
ժէ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.
ժը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.
ժթ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
ի) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.
իա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

6.37 Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:

6.38 Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու դեպքում, արտահերթ ժողովի կողմից՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ընդհանուր ժողովի որոշմամբ, սակայն չի կարող պակաս լինել երեք անդամից:

6.39 Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

6.40 Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում են նաև անվանատերերին:

6.41 Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

6.42 Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:

6.43 Խորհրդի նիստում քվորումն ապահովված է համարվում խորհրդի կազմում ընդգրկված անձանց 2/3 ներկայության դեպքում:

6.44 Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների 2/3-ով: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայն և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

6.45 Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

6.46 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը՝ Գլխավոր գործադիր տնօրենը, որն ընտրվում է Ժողովի կողմից:

6.47 Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

6.48 Գլխավոր գործադիր տնօրենը կազմակերպում է ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

6.49 Ընկերության Գլխավոր գործադիր տնօրենը՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից՝ օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված դեպքերում.

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ

ժա) հաստատում է ներքին ընթացակարգերը, վարկավորման և սպասարկման պայմանները, փաստաթղթերի տիպային օրինակները (ձևերը) և այլ ներքին փաստաթղթերը, բացառությամբ Ժողովի կամ Խորհրդի կողմից հաստատվող փաստաթղթերի,

ժբ) իրականացնում է Ընկերության ընթացիկ ղեկավարման հետ կապված այլ գործառույթներ, որոնց իրականացումը վերապահված չէ Ընկերության մյուս կառավարման մարմիններին կամ որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

6.50 Ընկերության Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

7.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Ընկերության վերստուգողին:

7.2 Վերստուգողի իրավասությունները և ստուգումների անցկացման կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:

7.3 Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

7.4 Վերստուգողն իր գործունեության ընթացում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված ներքին փաստաթղթերով՝ վերստուգողի աշխատանքի կանոնակարգով:

7.5 Վերստուգողն իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոս սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

7.6 Վերստուգողն իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածին համապատասխան:

7.7 Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

7.8 Վերստուգողին ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով:

7.9 Վերստուգողը հաշվետու է ժողովին: Վերստուգողը պետք է Ընկերության Խորհրդին եռամսյակային հաշվետվություն ներկայացնի:

7.10 Վերստուգողի վարձատրության և կամ (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ

8.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է աուդիտ իրականացնող կազմակերպություն, որը

գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

8.2 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացնել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոս սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում է ստուգում պահանջող բաժնետերը:

8.3 Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը: Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարող գումարի չափը:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ ԵՎ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

9.1 Վերստուգողը կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝

ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը.

բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը.

գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը.

դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին.

ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված տեղեկատվություններ:

9.2 Վերստուգողը Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

10. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10.1 Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում ՀՀ օրենսդրության և ԿԲ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: Ընկերության հաշվապահական հաշվառումը վարում է գլխավոր հաշվապահը, ով իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

10.2 Ընկերության գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Ընկերության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ստորաբաժանման կանոնակարգով:

10.3 Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները, պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, Գլխավոր գործադիր տնօրենին կամ այլ անձի:

10.4 Ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ:

10.5 Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և վիճակագրական հավետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, դրանցում արժանահավատ տեղեկատվություն արտացոլելու, ինչպես նաև Ընկերության Ժողովին, Խորհրդին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներում Ընկերության մասին անկողմնակալ ֆինանսական տեղեկատվություններ արտացոլելու համար:

10.6 Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Ընկերության բոլոր աշխատողների համար:

10.7 Առանձին գործառնությունների իրականացման հետ կապված՝ Ընկերության Գլխավոր գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարում է տվյալ գործառնությունը՝ Գլխավոր գործադիր տնօրենի կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գլխավոր գործադիր տնօրենը:

10.8 Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգողի եզրակացությամբ: Նշված փաստաթղթերը հրապարակելուց առաջ, պետք է ստուգվեն և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության և Ընկերության բաժնետերերի հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող աուդիտն իրականացնող անձի կողմից:

10.9 Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1 Ընկերությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

11.2 Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով և Ժողովի որոշումներով:

11.3 Սույն կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում՝ ժողովին մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների մեծամասնությամբ կամ խորհրդի միաձայն որոշմամբ:

11.4 Սույն կանոնադրությունը կազմված է հայերեն լեզվով:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Կրեդիտ Կոնցեպտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության հիմնադիրների (բաժնետերերի) ցուցակ՝ համապատասխան բաժնեմասերով

N	Անուն Ազգանուն (անձնագրի տվյալներ)	Բաժնետոմսերի քանակ (հատ)	Բաժնեմասի չափը (%)
1	Կարեն Պետրոսյան նույնականացման քարտ՝ 003684537	2607	3.509%
2	Արտակ Ալեքսանդրի Հարությունյան անձնագիր՝ BA1895640	7630	10.269%
3	Կարեն Ռոմանի Հովհաննիսյան նույնականացման քարտ՝ 014852115	3973	5.347%
3	Մանվել Ջոն Բաբկենի Վարդանյան անձնագիր՝ AS0402947	16265	21.891%
5	Ջոնաթան-Պատրիկ-Կոնրադ Սթարկ ՀՀ հատուկ անձնագիր՝ AA0004001	2800	3.769%
6	Էդգար Վարազդատի Գալստյան անձնագիր՝ AM0676327	1863	2.507%
7	Արմեն Արթուրի Այունց նույնականացման քարտ՝ 000381392	2171	2.922%
8	Մերի Աշոտի Նիկողոսյան անձնագիր՝ AK0541510	2794	3.760%
9	Անի Ազատի Մաթևոսյան անձնագիր՝ AM0807575	2200	2.961%
10	Վլադիմիր Մարտիրոսյան նույնականացման քարտ՝ 007786239	2607	3.509%
11	Մարինա Մամիկոնյան նույնականացման քարտ՝ 008576829	13000	17.497%
12	Ելենա Վյաչեսլավի Մալնեվա Ռուսաստանի Դաշնություն քաղաքացու անձնագիր՝ 550512349	1243	1.673%
13	Հրանտ Վոլոդյայի Կարապետյան ՀՀ ոչ բիոմետրիկ անձնագիր՝ AR0659080	8691	11.697%
14	Կարինե Աշոտի Խուդոյան Ռուսաստանի Դաշնություն քաղաքացու անձնագիր՝ 727961326	3973	5.347%
15	Կևորկ Արդաշեսի Քահանյան Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացու անձնագիր՝ 511003265	2483	3.342%
	Ընդամենը	**74300**	**100%**